ԱՎԱԶԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՆՁԻ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԵՋ

Խաչիբաբյան Ս.Ս. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
sosekhachibabyan@gmail.com
Ներկայացման ամս.՝ 18.07.2019
գրախոսման ամս.՝ 24.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Սույն հոդվածը նվիրված է ստեղծարարության՝ որպես անձի ինտեգրալ որակի էության, կառուցվածքի, հիմնական բնութագրիչների վերլուծությանը երևույթի ուսումնասիրության պատմական զարգացման համատեքստում: Գլխավոր շեշտադրումները արվել են՝ հիմնվելով հումանիստական ուղղության պատկերացումների, ինչպես նաև վերջին տասնամյակներում արդիականություն վայելող՝ ստեղծարարության բազմագործոնային տեսության գիտական մոտեցումների վրա: Հոդվածում հատուկ ուշադրություն է հատկացվել ստեղծարարության առանձին բնութագրիչների խթանման հարցին՝ որպես ստեղծագործական ներուժի ակտիվացման ճանապարհի, ինչը առավել պատկերավոր ներկայացնելու նպատակով աշխատանքում ընդգրկված է ստեղծարարության խթանման՝ մեր կողմից մշակված ֆունկցիոնալ մոդելը: Հոդվածի սահմաններում արծարծվել է նաև ստեղծարարության խթանման ուղիների հարցը, և այդ համատեքստում ներկայացված է նկարչության մի նոր և յուրահատուկ եղանակ՝ ավազանկարչությունը:

Հանգուցային բառեր՝ *ստեղծարարություն, ստեղծագործական պոտենցիալ, ստեղծարարության բնութագրիչներ, խթանում, ավազանկարչություն:*

«Ստեղծարարություն» երևույթի ուսումնասիրության՝ մինչ այժմ կուտակված գիտական փորձը իր մեջ ամփոփում է հոգեբանական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների վերլուծությունները ստեղծարարության, դրա կրողի՝ ստեղծարար անձի, ստեղծագործական գործընթացի և արդյունքի՝ ստեղծագործության վերաբերյալ: Ուսումնասիրելով ստեղծարարության հետազոտման մեր օրեր հասած ուղին՝ կնկատենք, որ այն սահուն ընթացք չի ունեցել, այլ անցել է հաճախ իրարամերժ տեսությունների բովով, երբեմն դիտարկվել է միակողմանիորեն՝ հոգեկանի մասնավոր ասպեկտների ծայրահեղ շեշտադրումներով և այլ ասպեկտների անտեսմամբ: Ինչևէ, անցնելով այս գիտական խմորումներով՝ ստեղծարարության վերաբերյալ տեսությունները մեզ են հասել քիչ թե շատ ամբողջական տեսքով:

Դարեր շարունակ ստեղծարարությունը դիտարկվել է երկու գլխավոր մոտեցումների՝ ռացիոնալիզմի և ռոմանտիզմի գաղափարների ներքո: Համաձայն առաջինի՝ ստեղծարարությունը գիտակցության, ռացիոնալ մտքի պտուղն է,

մինչդեռ երկրորդ ուղղությունը դիտարկել է երևույթը՝ որպես իռացիոնալ, անգիտակցական գործընթացների արդյունք, որոնք ենթակա չեն լիարժեք հետազոտման [6, էջ 15-18]:

18-րդ դարում հիմնական փիլիսոփայական վեճերը ընթանում էին ստեղծագործական հանճարի աղբյուրների շուրջ: Այս շրջանում ստեղծարարությունը հանճարի յուրահատուկ ձև էր ընկալվում [7; էջ 1-3]: Միայն ավելի ուշ՝ ռացիոնալիզմի մերժման ֆոնի վրա (Անգլիական Ռոմանտիկ Շարժում) հայտնվեցին հեղինակներ, ովքեր իրենց գրվածքներում ակնարկել են ստեղծարարության մեջ ոչ ռացիոնալ գործընթացների դերակատարումը, ավելին, ընդգծել են, որ ռացիոնալ մտադրությունը կարող է «սպանել» ստեղծարար մղումը՝ ակնարկելով ստեղծարարության մեջ անձնային գործընթացների ներգրավվածությունը: Ֆ. Գալտոնը սկիզբ դրեց ստեղծարարության փորձարարական հետազոտություններին [6, էջ 27-29]:

1980-ական թվականներից ստեղծարարությունը առավելապես ուսումնասիրվում է ամբողջականության մեջ՝ բազմագործոնային մոտեցման շրջանակներում, ընդ որում, այս գործոնները կարող են տատանվել հոգեբանական տարբեր ուղղությունների համատեքստում: Բազմագործոնային մոտեցման շրջանակներում կարևորվում է ոչ թե որևէ առանձին որակ կամ գործընթաց, այլ ամբողջական անձը իր տարբեր կողմերով, իսկ ստեղծարարության հիմքում դիտարկվում են կոգնիտիվ, կոնատիվ, հուզական և միջավայրային գործոնները [7, էջ 2-3]:

Վերջին շրջանում նկատվում է միտում՝ դիտարկելու ստեղծարարությունը առավելապես ստեղծագործական պրոցեսի տեսանկյունից՝ այդպիսով շեշտելով պրոցեսի կարևորությունը արդյունքի համեմատ: Ինչպես Կ. Սոյերն է նշել, այս իմաստով մեծ է հումանիստական ուղղության դերը, քանի որ միայն այս ուղղության ներկայացուցիչներն են ստեղծարարությունը դիտարկել ինքնաիրացման, ներքին մոտիվացիայի, պիկային ապրումների կողքին [6, էջ 27-34]:

Ստեղծագործությունը, ըստ հումանիստական ուղղության ներկայացուցիչներ Ա. Մասլոուի, Կ. Ռոջերսի, պետք է նպաստի անձի ինտեգրացիային, ամբողջականությանը: Հեղինակներն ընդգծել են, որ ստեղծագործության գլխավոր դրդապատճառը մարդու ինքնաիրացման, սեփական հնարավորությունների դրսևորման ձգտումն է, ստեղծագործական սկիզբը, որն արտահայտվում է զարգացման, անձնային հասունացման մեջ[1, էջ 15-19]: Ինչպես կարելի է նկատել, փորձ է արվել դիտարկել ստեղծարարությունը որպես անձի ամբողջականության, ինտեգրացիայի հոմանիշ, նրա ինքնաիրացման պարտադիր պայման, կրկին շեշտելով ստեղծարարության մեջ արդյունքի երկրորդական դերը:

Մենք հիմնվել ենք ստեղծարարությունը մեկնաբանող հումանիստական ուղղության հայացքների վրա՝ մասնավորապես մարդու ստեղծագործ էության, նրան բնորոշ ստեղծագործական ներուժի և ստեղծագործելու ներքին պահանջի՝ որպես ինքնաիրացման ճանապարհի մասին գաղափարների: Կարևորել ենք հումանիստական մոտեցման կողմից անձնային գործոնների շեշտադրումը՝ ստեղծարարության մեջ ընդունակությանը, տաղանդին առաջնահերթություն

չտալը՝ դրանով իսկ ընդգծելով ստեղծագործական պրոցեսի՝ արդյունքի համեմատ ունեցած առաջնայնությունը, ինչպես նաև ստեղծագործական ներուժի՝ որպես բոլոր մարդկանց հատուկ ներքին ուժի մասին պատկերացումները: Ինչ վերաբերում է ստեղծարարության բաղադրիչներին, հիմնվել ենք բազմագործոնային տեսության վրա, որը, ըստ մեզ, բոլորովին չի հակասում ստեղծարարության վերաբերյալ հումանիստական ուղղության պատկերացումներին, ավելին՝ առավել ակնհայտ է դարձնում հումանիստական ուղղության գաղափարը ստեղծարարության՝ որպես անձն ամբողջությամբ ընդգրկող երևույթի մասին: Այսպիսով, *մենք հասկանում ենք ստեղծարարությունը՝ որպես անձի ինտեգրալ հատկություն, որը բաղկացած է փոխկապակցված կողմերից (կոգնիտիվ, հուզական, անձնային, մոտիվացիոն) և ուղղված է իրացնելու յուրաքանչյուր անձին բնորոշ ստեղծագործական ներուժը:*

Ուսումնասիրելով ստեղծարարության բնութագրիչ կողմերը՝ նկատում ենք, որ չնայած անվանումների բազմազանությանը, հիմնականում խոսվում է մի քանի որակների մասին: Բազմագործոնային տեսության շրջանակներում այս բազմազան բնութագրիչները կարելի է խմբավորել կոգնիտիվ, կոնատիվ և հուզական գործոնների մեջ: Ստեղծարար անձի բնութագրերը փորձարարական ճանապարհով հետազոտելու առաջին փորձերը իրականացվել են Բերքլիի համալսարանի հետազոտական թիմի կողմից՝ էքսպերտային հարցման միջոցով: Արդյունքում դուրս են բերվել հետևյալ հիմնական բնութագրերը. այլաբերական (մետաֆորիկ) մտածողություն, ճկունություն, անկախություն, ինքնավարություն, անորոշության հանդեպ հանդուրժողականություն, ռիսկի դիմելու պատրաստակամություն, սեփական որոշումները կայացնելու քաջություն, դատողության անկախություն, համառություն, ինքնավստահություն և հավատ սեփական ստեղծարար էության հանդեպ, սեփական հակադիր և կոնֆլիկտող գծերին հարմարվելու ընդունակություն [7, էջ 47]:

Ա. Մասլոուն, խոսելով իր կողմից հետազոտվող ստեղծագործ անձանց մասին, օգտագործում է «բնական, ինքնաբուխ, էքսպրեսիվ, ինքնավստահ, բաց» հասկացությունները [8]: Ստեղծարար անձի որակների նմանատիպ նկարագրություն են տվել նաև այլ հեղինակներ. որոնք ուսումնասիրելով՝ նկատում ենք, որ շատ բնութագրիչներ տարբերվում են անվանումով, սակայն մոտ են կամ նույնն են իմաստով: Օրինակ՝ ռիսկի դիմելու ընդունակություն, քաջություն, ինքնաբուխություն՝ այս որակների նկարագրության մեջ առանցքային գիծը որոշումներում ինքնաբուխությունն ու որոշակի ռիսկի գնալու պատրաստակամությունն է, և թեև տարբեր հեղինակներ տարբեր անուններով են կոչում որակը, դրանից բովանդակությունը չի փոփոխվում: Նշվածը վերաբերում է նաև ստեղծարարության այլ բնութագրիչներին:

Մենք կենտրոնացել ենք ստեղծարարության որոշակի բնութագրիչների ուսումնասիրության վրա՝ համարելով դրանք առավել առանցքային: Դրանք են՝ հետաքրքրասիրությունը, զարգացած երևակայությունը, ռիսկի դիմելու կարողությունը, բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամությունը, որոնք, ըստ մեզ, հիմնականում արտահայտում են ստեղծարարության ընդհանուր

էությունը: Դիտարկելով նշված որակները բազմագործոնային մոտեցման շրջանակներում՝ հեշտությամբ կարող ենք առանձնացնել թե՛ կոգնիտիվ (երևակայություն), թե՛ հուզական (հետաքրքրություն), թե՛ կոնատիվ (բարդ առաջադրանքների հետ գործ ունենալու պատրաստակամություն, ռիսկի դիմելու կարողություն) բաղադրիչներ, որոնց միասնությունը, կարծում ենք, կարող է տալ ստեղծարարության քիչ թե շատ ամբողջական պատկերը:

Ստեղծարարության զարգացման և դրա վրա ազդեցության խնդիրը մեկ այլ կարևոր հարց է: Հարկ է նշել, որ այստեղ ևս մոտեցումները տարանջատվում են: Հիմնվելով հումանիստական ուղղության մոտեցումների վրա՝ մենք համարում ենք, որ *ստեղծարարությունը ի սկզբանե բնորոշ է մարդուն, ի ծնե տրված է նրան և գտնվում է դրսևորման պոտենցիալ վիճակում: Արտաքին միջավայրի ազդեցության տակ այն կարող է ճնշվել, չդրսևորվել, գտնվել որոշակի «նիրհի» փուլում: Միևնույն ժամանակ այն հնարավոր է խթանել՝ ազդեցության որոշակի միջոցների օգնությամբ:*

Կիրառելով ստեղծարարության «խթանում» եզրույթը՝ անհրաժեշտ ենք համարում տարբերակում մտցնել «խթանում» և «զարգացում» եզրույթների միջև՝ ըստ իմաստային կողմի: Է. Աղայանի բացատրական բառարանում «խթանել» բայը բացատրվում է՝ որպես գրգռել, հրահրել, դրդել, մղել, զարկ տալ, թափ հաղորդել, առաջ մղել, այն է՝ որոշակի առկա առարկայի, երևույթի կամ որակի դրսևորմանը նպաստելու, օգնելու գործընթաց: Ինչ վերաբերում է զարգացմանը՝ ապա այն ենթադրում է առավել տևական գործընթաց՝ որակական մեկ վիճակից, մակարդակից դեպի առավել բարձրին անցում [9]: *Համարում ենք, որ ստեղծարարությունը հնարավոր է խթանել՝ անձի ստեղծագործական ներուժի ակտիվացման ճանապարհով, որին, կարող է նպաստել ստեղծարարության տարբեր կողմերի վրա ուղղորդված, համակողմանի ազդեցությունը:*

Մենք կարևորել ենք այնպիսի մեթոդի ընտրությունը, որը թույլ կտար ակնկալել ստեղծարարության բնութագրիչների վրա *համակողմանի, ուղիղ և հարաբերականորեն արագ* ազդեցություն: Մենք համարում ենք, որ ավազանկարչությունը կարող է հանդիսանալ վերոնշյալ պահանջներին բավարարող մեթոդ՝ հաշվի առնելով ստորև բերվող հանգամանքները՝ 1. մեթոդի նորույթը, գրավչությունը, 2. նկարելու «ճիշտ և սխալ» եղանակների կաղապարների բացակայությունը, 3. նյութի անորոշությունը, 4. գործընթացի պարզությունը և հասանելիությունը 5. գործընթացի դինամիկությունը, անընդհատությունը, 6. ձախ և աջ ձեռքերով նկարելու հնարավորությունը, 7. նկարելու եղանակների բազմազանությունը:

- Մենք համարում ենք, որ ներկայիս՝ տեխնիկապես հագեցած, տեղեկատվական «գրոհի» ժամանակաշրջանում ստեղծարարությունը հնարավոր է խթանել այնպիսի մեթոդի օգնությամբ, որը կլինի նորույթ, կկարողանա հետաքրքրություն շարժել: Կ. Ռոջերսը խոսել է նրա մասին, որ ստեղծարարության զարգացման մեջ առաջին քայլը ստեղծագործելուց հաճույք ստանալն է: Հեղինակի խոսքերով՝ դա կարող է վերականգնել անձի՝ սեփական բնածին ստեղծարարության հետ կապը [4,

էջ 246-250]: Ավազանկարչությունը բավարարում է վերոնշյալ պահանջները. մեթոդը նոր է, շատերին անծանոթ, իսկ գործընթացը՝ հաճելի և հանգստացնող:

- Կարևորել ենք ավազանկարչության նոր և մեծամասնության համար անծանոթ լինելը ևս մեկ պատճառով. երեխաները չգիտեն՝ ինչպես «ճիշտ» կամ «լավ» նկարել ավազով, ուստի ազատ են ստեղծագործելը խոչընդոտող կաղապարներից: Մեթոդի հետ առնչված չլինելու՝ ազատ ստեղծագործելուն նպաստելու հանգամանքի մասին տարբեր ձևակերպումներով խոսել են Է. Ֆրոմը, Կ. Ռոջերսը և այլ հեղինակներ՝ նշելով, որ որքան անծանոթ է մեթոդը, այնքան մեծ է դրա՝ ստեղծարարությանը զարկ տալու հնարավորությունը [4, էջ 184-216]:
- Ավազն անորոշ նյութ է, զուրկ է որոշակի ձևից, հեշտ է ձևափոխվում, ինչը ստեղծարարության խթանման մեկ այլ կարևոր շարժառիթ կարող է հանդիսանալ: Փոխակերպումների կարևորության մասին նշել են շատ հեղինակներ, մասնավորապես՝ Չ. Լոմբրոզոն, Կ. Ռոջերսը, Ռ. Դիլտսը՝ համարելով, որ ըստ էության ստեղծագործությունը մարդու վերափոխող ակտիվությունն է, արդեն հայտնի տարրերի վերակառուցումը [1, էջ 157-162]: Ավազանկարչության գործընթացում ավազը որպես նյութ անորոշ է, քանի որ առօրյայում սովորաբար չի կիրառվում՝ որպես նկարչական նյութ, ուստի նկարելիս պահանջվում է երևակայության աշխատանք՝ ավազին որոշակի ձև հաղորդելու համար:
- Ստեղծարարության խթանման գործընթացում ավազանկարչության դերն ուսումնասիրելիս կարևոր ենք համարում գործընթացի պարզությունն ու հասանելիությունը. այն հատուկ ջանքեր չի պահանջում նկարողից: Ավելին, եթե որևէ երեխայի մոտ թղթի վրա մատիտով «ծառ» նկարելն, օրինակ, մեծ լարում է պահանջում, ապա ավազով նկարելիս նույն ծառը կարող է ստացվել շատ հեշտությամբ, քանի որ ավազանկարչության տեխնիկան տարբերվում է սովորական նկարչությունից, և պատկերներ ստանալ հնարավոր է ձեռքի մեկ կամ մի քանի շարժումով: Ուստի կարող ենք ենթադրել, որ այն կարևոր խթան կհանդիսանա երեխայի ինքնավստահության, սեփական ստեղծագործող կողմի ընդունման գործընթացում:
- Ավազանկարչությունը հնարավորություն է տալիս նկարել ինչպես աջ, այնպես էլ ձախ ձեռքով: Շատ հետազոտություններ փաստում են, որ կիսագնդերը՝ կառավարելով ձեռքերի աշխատանքը, փոխպայմանավորվածության մեջ են գտնվում դրանց հետ, այսինքն ոչ միայն աջ կիսագունդն է ի զորու կառավարել ձեռքի աշխատանքը, այլև ծայրամասային բաժնի աշխատանքը կարող է խթանել կիսագնդի աշխատանքը: Աջ կիսագունդը, փաստորեն, պատասխանատու լինելով ստեղծագործական մտածողության, երևակայության համար, գտնվում է ձախ ձեռքի հետ փոխադարձ կապվածության մեջ [2, էջ 38-62]: Ուստի կարելի է ենթադրել, որ աշխատելով ձախ ձեռքով՝ հնարավոր է ակտիվացնել ստեղծագործական մտածողության և երևակայության կենտրոնները:
- Ավազանկարչության գործընթացը դինամիկ է, անընդհատ: Այն թույլ է տալիս կենտրոնանալ գործընթացի, այլ ոչ արդյունքի վրա, քանի որ ավազանկարները չեն պահպանվում, ամեն նոր նկարի համար անհրաժեշտ է ավազի

շերտով ծածկել սեղանի մակերևույթը, բացի այդ, ավազի վրա նկարված պատկերի փոփոխելիության շնորհիվ հնարավոր է ստանալ շարժական, անիմացիոն տեսարաններ: Այս հանգամանքը կարևորում ենք՝ հիմնվելով հումանիստական ուղղության ներկայացուցիչներ Ա. Մասլոուի, Է. Ֆրոմմի, Կ. Ռոջերսի մոտեցումների վրա, ովքեր ստեղծագործական գործընթացի գերակայումը արդյունքի նկատմամբ համարում էին ստեղծարարության կարևոր կողմերից [4, էջ 121; 8]:

- Հարկ է անդրադառնալ նաև ոչ պակաս կարևոր առանձնահատկության՝ նկարելու եղանակների բազմազանության վրա. ավազով նկարել հնարավոր է ձեռքի ամենատարբեր հատվածներով (մատներով, ափով, բռունցքներով, նույնիսկ դաստակով), ինչը, ենթադրում ենք, կարող է ընդլայնել երեխայի պատկերացումները ստեղծագործելու միջոցների և եղանակների մասին ու ներշնչել նոր գաղափարներ:

Կարող ենք եզրակացնել, որ բոլոր այս առանձնահատկությունների շնորհիվ ավազանկարչությունը կարող է խթանող ազդեցություն ունենալ ստեղծարարության բաղադրիչների վրա, որոնք իրենց հերթին կարող են ակտիվացնել ստեղծագործական ներուժը:

Ստեղծարարության խթանման մեր ներկայացրած մոդելը ամբողջական պատկերով ներկայացված է նկար 1-ում.



Նկար 1. Ստեղծարարության խթանումը ավազանկարչության միջոցով

Այսպիսով, ստեղծարարությունը կարելի է բնութագրել որպես անձի ինտեգրալ, բազմաբաղադրիչ որակ, որը կարելի է խթանել՝ զարկ տալով ստեղծարարության տարբեր կողմերին՝ այդպիսով նպաստելով ստեղծագործական ներուժի ակտիվացմանը: Վերջինին կարող է նպաստել ավազանկարչությունը, որը իրեն բնորոշ առանձնահատկությունների շնորհիվ կարող է ուղիղ ազդեցություն գործել ստեղծարարության բաղադրիչների վրա:

Գրականություն

1 **Ильин Е.П**. Психология творчества, креативности, одаренности. : Питер; СПб.; 2009, 434 с.
2 **Каппачионе Л**. Сила другой руки или Как при помощи левой руки активизировать возможности правого полушария головного мозга . – М.: София, 2005. – 336 с.
3 **Роджерс К**. Становление личности. – Эксмо-Пресс-2001, 416 с.
4 **Роджерс Н. К**. Творческая связь: изд-во Манн, Иванов и Фербер – 2015, 336 с.
5 **Фромм Э**. Иметь или быть. Величие и ограниченность теории Фрейда. -М.: ООО "Фирма "Издательство АСТ", 2000. - 448 с.
6 **Sawyer K.** Explaining Creativity. Oxford University Press, 2006, 354 p.
7 **Любарт Т., Муширу К., Торджман С., Зенасни Ф**. Психология креативности: Серия: Университетское образование. М.: Когито-Центр, 2009. — 216 с. https://www.litres.ru/k-mushiru/psihologiya-kreativnosti
8 **Маслоу А.Г.** Психология бытия - М.: "Рефл-бук" – К.: "Ваклер", 1997.- 300с. https://psy.wikireading.ru/22696
9 http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp

РОЛЬ РИСОВАНИЯ ПЕСКОМ В СТИМУЛИРОВАНИИ КРЕАТИВНОСТИ ЛИЧНОСТИ

Хачибабян С.С. (ЕГУ, Ереван, Москва)

Настоящая статья посвящена изучению креативности как интегрального качества личности, ее структуры и основных характеристик в контексте исторического развития данного понятия. Особо акцентированы понимание креативности с точки зрения гуманистической психологии, а также многофакторная теория креативности, сформировавшаяся в последние десятилетия. В статье особое внимание уделяется вопросу стимулирования отдельных характеристик креативности с целью активизации творческого потенциала. Представлена модель, более образно отражающая данную идею. В рамках статьи обсуждается также вопрос о возможных путях стимулирования креативности, и в данном контексте представлен новый, оригинальный метод рисования – рисование песком. До настоящего времени рисование песком как инструмент психологической работы не имеет научных исследований, что особо подчеркивает актуальность нашей работы. В статье представлен подробный анализ особенностей рисования песком, целью которого является обоснование возможностей данного метода для стимулирования креативности.

Ключевые слова: *креативность, творческий потенциал, характеристики креативности, стимулирование, рисование песком.*

THE ROLE OF SAND ART IN PROMOTING PERSONAL CREATIVITY

Khachibabyan S. S. (YSU, Yerevan, Armenia)

This article is devoted to analysis of creativity, as the essence, structure, and main characteristics of the integral quality of a person, within the context of historical development of the subject studies. The main highlights were made based on the understanding of humanitarian orientation, as well as on the scientific approaches to multifunctional theory of creativity which has been up-to-date in recent decades. The article specifically focuses on the promotion of separate characteristics of creativity as a way of activating creative potential, and for more illustrative purposes thereof the article covers a functional model developed by us to promote creativity. The article also touches upon the issue of ways of promoting creativity, and within such context a new and unique method of painting is preseneted - sand art. Scientific studies on the sand art as a tool of psychological work are not known yet, which makes our work more relevant.The article provides a detailed analysis of the typical features of sand art which aims to justify the capabilities of this art to promote creativity characteristics.

Keywords: *Creativity, creative potential, creativity characteristics, promotion, sand art.*